

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

15.07.2013թ.

Գ.Բաղրամյան

2013թվականի հուլիսի 15-ին ժամը 15:00-ին կայացավ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ղեկավարի 2013թվականի 1-ին կիսամյակի գործունեության հաշվետու ժողովը, մասնակցությամբ ավագանու անդամների, համայնքի ղեկավարի աշխատակազմի 13 աշխատակիցների, մշակույթի տան, մանկապարտեզի, բուժամբուլատորիայի տնօրենների, համայնքի 35 բնակիչների և Արմավիրի մարզպետարանի ՏԻ և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության գործադիր մարմինների հետ տարվող աշխատանքների բաժնի պետ Յովհաննես Պետրոսյանի

Նախագահությամբ՝ համայնքի ղեկավար Բ. Շահբազյանի  
Քարտուղարությամբ՝ աշխատակազմի քարտուղար Ս. Մուրադյանի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ

1. Արմավիրի մարզի Բաղրամյան գյուղական համայնքի ղեկավարի 2013թվականի 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությունը

Լսեցին - Արմավիրի մարզի Բաղրամյան գյուղական համայնքի ղեկավարի 2013թվականի 1-ին կիսամյակի գործունեության վերաբերյալ համայնքի ղեկավարի զեկույցը:

Բ.Շահբազյանը ժողովի մասնակիցներին մանրամասն զեկույցեց 2013թվականի 1-ին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների մասին, հատկապես

1. Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների բնագավառ
2. ֆինանսների /բյուջեի եկամուտների և ծախսերի/
3. քաղաքաշինության և կոմունալ տնտեսության
4. պաշտպանության և հասարակական կարգի պահպանության
5. հողօգտագործման և գյուղատնտեսության
6. առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
7. կրթության և մշակույթի
8. սոցիալական հարցերի
9. առևտրի և սպասարկման բնագավառների վերաբերյալ համաձայն հավելվածի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Բ.ՇԱՀԲԱԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ս.ՄՈՒՐԱԴՅԱՆ



ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ (ՎԱՂԱՐՇԱՊԱՏ) ԴԵՎՎԱՎՈՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ  
ԿԻՍԱՄՅԱԿԻ ԱՇՆԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արձաժամի մարզի Բաղրամյան համայնքի ղեկավարը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրանից բխող այլ իրավական ակտերի պահանջներով, 2013 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում իրականացրել է որոշակի աշխատանքներ ստորև ներկայացվող հետևյալ բնագավառներում .

### 1. Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների բնագավառ:

- Համայնքի բնակիչների օրինական շահերը պաշտպանելու նպատակով 45 անգամ հանդես է եկել տարբեր միջնորդություններով մարզպետարանում, Վաղարշապատի տարածքային ստորաբաժանումում, նոտարական գրասենյակում, քաղաքացիական ակտերի կացության գրանցման բաժնում, սոցիալական ծառայության բաժնում, ոստիկանության բաժանմունքներում, զինվորական կոմիսարյատում և այլ կազմակերպություններում:
  - Կատարվել է համայնքի բնակիչ հանդիսացող 160 քաղաքացիների ընդունելություն, բնարկվել է տարբեր բնույթի հարցեր, առաջարկություններ, որոնց մեծ մասին տրվել է դրական լուծում
- 2013թվականի 1-ին կիսամյակի ընթացքում բնակիչներից ստացվել է
  - 18 դիմում, որոնցից 17-ին ժամանակին տրվել է պատասխան:
  - ստացվել է 55 գրություն, ուղարկվել է մարզպետարան, անշարժ գույքի կադաստրի ստորաբաժանում և այլ կազմակերպություններին 61 գրություն
  - կայացվել է համայնքի ղեկավարի 36 որոշում, ավագանու 3-նիստ
  - արձակվել է 24 կարգադրություն
  - բնակչությանը տրամադրվել է տարբեր բնույթի 429 տեղեկանքներ
  - Աշխատակազմի միջոցով կատարվել է համայնքի բնակչության ամենամյա սեռատարիքային հաշվառման և անատունների հաշվառման աշխատանքները
  - կազմակերպվել է համայնքի գրքերի, գործավարության մատյանների, արխիվային գործի, տարբեր բնույթի հաշվետվությունների, տեղեկատվությունների, հաշվապահական հաշվառման և այլ փաստաթղթերի կազմման և վարման գործընթացը
  - աշխատակազմի միջոցով օժանդակվել և անհրաժեշտ փաստաթղթեր է տրամադրվել համայնքի բնակիչներին տարբեր ֆինանսական կազմակերպություններից և բանկերից գյուղատնտեսական, բնակարանային շինարարության և այլ վարկեր ստանալու նպատակով

### 2. Ֆինանսների բնագավառ

Կիսամյակային կտրվածքով ապահովվել է համայնքի բյուջեով նախատեսված բյուջեի եկամուտների հավաքագրումը, տնօրինվել բյուջեի ֆինանսական միջոցները, ապահովվել դրանց նպատակային օգտագործումը, ստորագրվել բոլոր ֆինանսական փաստաթղթերը:

2013թվականի առաջին կիսամյակի վարչական բյուջեով պլանավորված եկամուտները կազմում են

- ընդամենը 24944700 դր, որից
- հողի հարկ 1725000 դր.
- գույքահարկ 1842500 դր.
- վարձակալական հողի հարկ 104200 դր
- տեղական տուրքեր 152800 դր
- տեղական վճարներ 50000 դր
- դոտացիա 21070200 դր

**2013 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում կատարվել է եկամուտների հավաքագրում**

- վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը 960000 դր.
- ընդամենը 23878600դր, որից
- հողի հարկ 1148800 դր.
- գույքահարկ 1332800 դր.
- վարձակալական հողի հարկ 80600 դր
- տեղական վճարներ 58600 դր
- դոտացիա 21070200 դր
- տեղական տուրքեր 187600 դր

**Վարչական բյուջեի 2013թվականի առաջին կիսամյակի կատարված ծախսերը**

- ընդամենը 21690610 դրամ, որից
- աշխատավարձ և հավելավճարներ 10872310 դր
- ծառայությունների և ապրանքների ձեռք բերում ծախսեր՝ 2839300 դր
- սուբսիդիա 7399000 դր
- սոց. օգնություն՝ 580000 դր

**Ֆոնդային բյուջեի 2013 թվականի առաջին կիսամյակում պլանավորված եկամուտները**

- Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը ընդամենը 1965710դրամ

**Ֆոնդային բյուջեի 2013 թվականի առաջին կիսամյակի ծախսերը**

- ընդամենը 478000 դրամ, որից
- սարք և սարքավորումների ձեռք բերում 478000 դր.

**3 Բաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ**

- տրվել է 1 ավարտական ակտ, 5 շինարարության թույլտվություն
- քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման և սահմանների ճշտման աշխատանքներ, տրվել են ճշտված 2 իրավիճակային հատակագծեր
- համայնքի զբոսայգում կազմակերպվել է ծառատունկ, որտեղ տնկվել է հիսունից ավելի դեկորատիվ ծառեր, տեղադրվել են սեղաններ իրենց նստարաններով
- գազաֆիկացվել է համայնքի Բաղրամյան փողոցի վերջնամասի բնակելի տները անցկացվել է 150գծ խողովակաշար, ներկայումս աշխատանքներ են տարվում համայնքի Շահումյան փողոցի վերջնամասի բնակելի տների գազաֆիկացման համար
- Մարտ - ապրիլ ամիսներին կազմակերպվել և մաքրվել է համայնքի ոռոգման ներտնտեսային ցանցը
- երկարամյա շահագործման հետևանքով շարքից դուրս եկած մոտ 270գծ ոռոգման ջրագիծը փոխարինվել է նորով
- համայնքի Իսահակյան, Կոմիտաս և Բաղրամյան փողոցներում կատարվել է ասֆալտի կապիտալ վերանորոգում, 1-ին կարգի ասֆալտով
- իրականացվում է կանոնավոր աղբահանություն ամբողջ համայնքի բնակելի տարածքում շաբաթը 3օր, համայնքի միջոցներով ձեռք բերված դիզ. վառելանյութով
- իրականացվել է կանոնավոր աղբահանություն Բաղրամյան համայնքից մինչև Երևան-Էջմիածին մայրուղի հասնող ամբողջ երկայնքով շուրջ 3 կմ երկարությամբ

#### 4. Պաշտպանության և հասարակական կարգի պահպանության բնագավառ

- Աջակցություն է ցուցաբերվել զարնանային զորակոչին, զինկոմիսարիատից ստացված մոտ 65 ծանուցագրերը հանձնվել են զորակոչիկներին, իսկ բացակաների համար տրվել են համապատասխան տեղեկանքներ՝ նրանց մոտավոր գտնվելու վայրի վերաբերյալ
- Հունվար ամսին 26 նախազորակոչային պատանիներ զինկոմիսարիատում անցել են բժշկական զննում:
- 5 պատանիներ զորակոչվել են ՀՀ բանակ, ներկայումս շարունակվում է զորահավաքը:
- Բանակից զորացրվել են 7 զինծառայողներ և սահմանված ժամկետում հաշվառվել զինվորական կոմիսարիատում
- Մայիսի 17-ին Էջմիածնի զինկոմիսարիատի կողմից կազմակերպված ուսումնառարժական հավաքին համայնքից մասնակցել են 8 պահեստազորայիններ
- Աջակցություն է ցուցաբերվել Արցախյան պատերազմի մասնակիցներին, առողջական և այլ բնույթի խնդիրների լուծման կապակցությամբ
- Մարտի 20-ին զարնանային զինակոչին մասնակցող զինակոչիկներին նվիրված կազմակերպվել է միջոցառում և նվերների հանձնում
- Մայիսի 9-ին կազմակերպվել է հաղթանակի և Շուշիի ազատագրման օրվան նվիրված միջոցառում
- Մայիսի 28-ին Սարդարապատի հուշահամալիրում կազմակերպվել է միջոցառում նվիրված Հայաստանի 1-ին հանրապետության անկախության օրվան
- Մշտական օժանդակություն է ցուցաբերվել համայնքի տարածքը սպասարկող Ոստիկանության Էջմիածնի բաժնի աշխատակիցներին, հասարակական կարգը պահպանելու, վարչական և քրեական իրավախախտումները բացահայտելու և կանխելու նպատակով:
- Ոստիկանության աշխատակիցներին պարբերաբար տեղեկատվություն է ներկայացվել համայնքում ժամանակավոր բնակվող անձանց մասին:

#### 5. Հողօգտագործման և գյուղատնտեսության բնագավառ

- Կատարվել է համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի հողային հաշվեկշռի կազմման աշխատանքները, համագործակցելով մարզպետարանի գյուղվարչության և կադաստրի տարածքային ստորաբաժանման հետ
- Մատուցվել է մասնագիտական խորհրդատվական ծառայություն համայնքի հողօգտագործողներին, բույսերի ճիշտ մշակման հիվանդությունների դեմ պայքարի, ոռոգման ժամկետների ու եղանակների, ստացված գյուղմթերքների վաճառքի ու մթերման գործընթացում
- հունվար ամսին կատարվել է համայնքի տարածքում գտնվող անասունների հաշվառում և ներկայացվել վիճակագրական ծառայություն, նախատեսված ժամկետներում կատարվել է իմունոկանխարգելիչ միջոցառումներ /բրուցելյոզ՝ խոշոր եղջերավոր անասունների 310 գլուխ, դաբաղ 310 գլուխ, տուբերկուլյոզ 240 գլուխ, սիբիրախտ – 240 գլուխ, խշխշան պալար 280 գլուխ, խոզի ժանտախտ 201 գլուխ, սիբիրախտ 195 գլուխ, կարմրախտ 70 գլուխ, մեղուների բիպին 150 մեղվաընտանիքի, թռչնի ժանտախտ 2230 թև
- իրականացվել է համայնքի գյուղատնտեսական մշակաբույսերի, ցանքատարածությունների, բազմամյա տնկարկների տարածքների հաշվառում և տվյալների ներկայացում վիճակագրական ծառայություն

## 6 Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառ

- Համայնքում գործում է մեկ բուժ. ամբուլատորիա, որը սպասարկում է համայնքի 3073 բնակիչներին:
- Բուժ. ամբուլատորիան ապահովված է նոր սարքավորմամբ:
- 2013թվականի 1-կիսամյակի ընթացքում բուժ.ամբուլատորիայի ընդունելությունը կազմել է 1835 այց, որից՝ 1420-ը 18 և բարձր տաիքի, 415-ը մինչև 18 տարեկան երեխաներ,
- կանխարգելիչ նպատակով այցերը կազմել են 736
- կանխարգելիչ պատվաստումները կազմել են 178
- գրանցվել է 80 տնային կանչ, ներառյալ նորածնների մեծ խմբի այցերը
- կատարվել են լաբորատոր-գործիքային հետազոտություններ
- Համայնքում գործում է Սպորտի և երիտասարդության նախարարությանը կից ծանրամարտի սպորտ դպրոցի մասնաճյուղ ( տնօրեն Դոզսեն Սիրգոյան), որտեղ մարզվում են համայնքի և հարևան համայնքների շուրջ 40 մարզիկներ:
- Համայնքում գործում է բուժքրամարտի դպրոց, որտեղ մարզվում են 25 պատանիներ /մարզիչ՝ սպորտի վարպետ Գնել Ասլանյան/, որոնք մասնակցել են 77 բուժքրամարտի առաջնությանը և բարձր առաջադիմություն ցուցաբերել:

## 7 Կրթության և մշակույթի բնագավառ

1. Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց: Աշակերտների թվաքանակը՝ 331: Կազմակերպչական հարցերով աջակցություն է ցուցաբերվում միջնակարգ դպրոցի բնականոն գործունեությանը: Գյուղապետարանի աշխատակազմի միջոցով ծնողների հետ տարվող բացատրական աշխատանքների արդյունքում դպրոցից խուսափող և պարտադիր ուսուցումից դուրս մնացող երեխաներ չկան
2. Համայնքում գործում է մեկ մանկապարտեզ՝ երեք խմբով 85-երեխա: Կազմակերպվել են միջոցառումներ՝ նվիրված մայրության, հաղթանակի և երեխաների պաշտպանության օրերին:
3. «Մշակույթ» միացյալ տնօրինությունում գործում է մեկ պարի խումբ 22 աշակերտ, որը մասնակցել է հանրապետական միջոցառումների և շահել է առաջին կարգի դիպլոմ, մեկ ասմունքի խումբ՝ 12 աշակերտ  
Մշակույթի տանը կազմակերպվել է երգի պարի ասմունքի բազմաթիվ միջոցառումներ նվիրված հայոց բանակի, մայրության, հաղթանակի, երեխաների պաշտպանության տոներին:

Գյուղապետարանը մասնակցել է դպրոցում, մանկապարտեզում և մշակույթի տանը կազմակերպված բոլոր միջոցառումներին և ցուցաբերել է կազմակերպչական և նյութական օգնություն

## 8. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՐ

Համայնքի բնակիչներից ստացվել է 21 դիմում, սոց օգնություն տրամադրելու մասին, որոնցից 18-ին հատկացվել է դրամական օգնություն

## 9. ԱՌԵՎՏՐԻ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՐ

Սահմանված կրգով հսկողություն է իրականացվել համայնքի տարածքում գործող 6 խանութներում:  
Տրվել է ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի 10 թույլտվություն

## 2013 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

### Համայնքում առկա են հետևյալ հիմնախնդիրները

1. տարիների ընթացքում ամբողջությամբ չորացել և անապատի են վերածվել սեփականաշնորհված շուրջ 250 հա հողատարածքներ:
2. Համայնքի ենթակայության մոտ 22կմ. ոռոգման ջրագծերը (կիսախողովակներ) գրեթե լրիվ քայքայված վիճակում են:
3. երկարամյա օգտագործումից, ինչպես նաև անձրևաջրերի և քամիների ազդեցությունից քանդվել է մշակույթի տան դահլիճը, կոտրվել են պատուհանները:

### Առաջնահերթ խնդիր է

1. Համայնքի Մշակույթի տան կապիտալ վերանորոգումը (բացառությամբ տանիքի):
2. Ոռոգման համակարգի վերանորոգումը, վերականգնումը:
3. Խաղողագործությունը և պտղաբուծության վերականգնումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Բ. Ս. ՇԱՀԲԱԶՅԱՆ